Իրավական թարմացում

Սույն փաստաթուղթը տրամադրում է տեղեկատվություն հոկտեմբեր ամսվա ընթացքում փոփոխված և ընդունված օրենսդրական ակտերի վերաբերյալ:

LEGELATA
LAW FIRM

Բովանդակություն

Մաս I

Փոփոխված օրենսդրական ակտեր

- ՀՀ Հարկային Օրենսգիրք
- ՀՀ Օրենքը Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին
- ՀՀ Աշխատանքային օրենսգիրք
- ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
- ՀՀ Քրեական օրենսգիրք

ՄԱՍ II

Նոր օրենսդրական ակտեր

- Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին ՀՀ օրենքը
- ՀՀ Կառավարության 1708-Ն որոշումը թուրքական ծագում ունեցող ապրանքների ներկրման ժամանակավոր արգելքի մասին

Կոնտակտներ

Մաս I

Փոփոխված օրենսդրական ակտեր

Օրենսդրական ակտի անվանումը

ՀՀ Հարկային օրենսգիրք

Փոփոխության կարգավիճակը

Փոփոխություններն ուժի մեջ են:

Ինչ այլ օրենսդրական ակտեր են փոփոխվելու դրա արդյունքում

Այլ օրենսդրական ակտեր չեն փոփոխվելու:

Ինչին են վերաբերում փոփոխությունները

Օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեն առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար ստեղծել հնարավորություն առանց լրացուցիչ հարկային պարտավորություններ կրելու ներել ռազմական գործողությունների հետևանքով զոհված կամ հաշմանդամ դարձած ֆիզիկական անձանց, ինչպես նաև նրանց ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողների վարկային պարտավորությունները: Առևտրային բանկերի համար հնարավորություն կստեղծի ներել ինչպես անհուսալի ճանաչված, այնպես էլ դեռ անհուսալի չճանաչված վարկային պարտավորությունները: Նախատեսվում է վարկի ներվող գումարները ֆիզիկական անձանց համար դիտարկել որպես նվազեցվող եկամուտներ, որպեսզի հարկային գործակալները ստիպված չլինեն ներվող գումարի համար հաշվարկել և բյուջե վճարել եկամտային հարկ:

Հոդված 108. **Եկամուտ չհամարվող տարրերը**	**Փոփոխել 108-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը հետևյալ բովանդակությամբ՝**
1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում՝	2018 թվականի օգոստոսի 31-ը» բառերը փոխարինել «2020 թվականի օգոստոսի 31-ը» բառերով:
18) Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն՝ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը անհուսալի ճանաչված ակտիվների մասով մինչև դրանց անհուսալի ճանաչելը հաշվարկված և նախկինում հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված՝ տվյալ ֆիզիկական անձին ներված (այդ թվում՝ մասնակի) տույժերի և (կամ) տուգանքների գումարները: Հարկման նպատակով եկամուտ չեն համարվում նաև փոխառուների	

նկատմամբ ձևավորված և անհուսալի ճանաչված ակտիվների գծով արտահաշվեկշռում (հետհաշվեկշռային հաշիվներում) հաշվառվելու ընթացքում հաշվարկված տոկոսները և (կամ) տույժերը և (կամ) տուգանքները՝ դրանց հաշվառման (հաշվարկման, հաշվեգրման) պահին, ինչպես նաև դրանց հետագա զիջման կամ ներման (այդ թվում՝ մասնակի) դեպքում.	
Հոդված 124. **Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումները**	**Լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ կետով՝** 3. Ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի եւ վարկային կազմակերպությունների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաեւ այդ բանկերում եւ վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձեւավորված եւ Կառավարության լիազորած մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն՝ 2020 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ 91 եւ ավելի օր չաշխատող (ժամկետանց) համարվող՝ դեռեւս անհուսալի չճանաչված ակտիվներում ներառված տույժերը եւ (կամ) տուգանքները՝ դրանք տվյալ ֆիզիկական անձանց ներելու եւ այդ մասով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մինչեւ այդ մասհանումներ կատարած լինելու դեպքում՝ պահուստին ուղղված գումարների չափով համախառն եկամտում վերականգնելու դեպքում:
Հոդված 108. Եկամուտ չհամարվող տարրերը **1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում՝**	**Լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ կետերով՝** 23) բանկերում եւ վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետեւանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձեւավորված ու Կառավարության լիազորած մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն անհուսալի ճանաչված՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված ակտիվները (ներառյալ՝ վարկի եւ այլ գումարները, մինչեւ դրանց անհուսալի ճանաչվելը եւ անհուսալի ճանաչվելուց հետո հաշվարկված տոկոսները, տույժերը եւ (կամ) տուգանքները)՝ դրանք ներելու դեպքում՝ անկախ սույն մասի 18-րդ կետի դրույթներից.

	24) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետեւանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին, նրա՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից ներվող պարտավորությունները (ներառյալ՝ վարկի եւ այլ գումարները, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի եւ (կամ) տուգանքների գումարները):

Հոդված 147. Նվազեցվողեկամուտները (նվազեցումները) 1. Հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝	**Լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ կետով՝** 40) ռազմական դրության ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետեւանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների տված վարկի գումարների ներման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները՝ անկախ սույն մասի 19-րդ կետի դրույթներից։»: Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո սույն օրենքով սահմանված անձանց ներված՝ մինչեւ ռազմական դրության ավարտը ստացված վարկի կամ այլ գումարների, դրանց գծով հաշվարկված տոկոսների, տույժերի եւ (կամ) տուգանքների նկատմամբ:

Օրենսդրական ակտի անվանումը

ՀՀ օրենքը Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին

Փոփոխության կարգավիճակը

Փոփոխություններն ուժի մեջ են:

Ինչ այլ օրենսդրական ակտեր են փոփոխվելու դրա արդյունքում

Այլ օրենսդրական ակտեր չեն փոփոխվելու:

Ինչին են վերաբերում փոփոխությունները

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումներով ռազմական դրության ընթացքում անձանց գույքի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու պարագայում առկա չէին գույքը օգտագործման վերցնելու համապարփակ կարգավորումներ չնայած այն հանգամանքին, որ ռազմական դրության ռեժիմը ենթադրում է սեփականության իրավունքի սահմանափակումներ:
Այսպիսով, երկրում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել ռազմական դրություն հայտարարվելու դեպքում կիրառվող միջոցառումների եւ սահմանափակումների թվում նախատեսել նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքի օգտագործումը՝ հնարավորություն տալով Կառավարությանը, ըստ անհրաժեշտության, սահմանելու նման միջոցառում: Միաժամանակ, առանձին հոդվածով հնարավորինս մանրամասնեցվում է գույքն օգտագործման վերցնելու ընթացակարգը՝ օրենքի մակարդակով ամրագրելով անձանց սեփականության իրավունքի՝ տվյալ իրավիճակին համարժեք երաշխիքներ:
Բացի վերոնշյալից՝ իրավական հիմք է նախատեսվում այդպիսի դեպքերում օգտագործված գույքի փոխհատուցումն ապահովելու համար

Հոդված 8.	**Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրականացվող միջոցառումները սահմանափակումները**	**Լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ կետով՝ և ժամանակավոր**
1. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում կարող են իրականացվել հետևյալ միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները.		ժէ) անհրաժեշտության դեպքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքի օգտագործում՝սույն օրենքի 8.1-ին հոդվածով սահմանված կարգով:

Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով

«Հոդված 8.1. Ռազմական դրության իրավական ռեժիմ ընթացքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույք օգտագործումը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով կարող է օգտագործվել նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքը (բացառությամբ դրամական միջոցների, արժեթղթերի եւ գույքային իրավունքների), եթե պետության տիրապետության ներքո գտնվող համապատասխան գույքը բավարար չէ: Ընդ որում, գույքի անբավարարությունը գնահատվում է՝ նաեւ հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը, հրատապությունը, գույքի գտնվելու վայրը եւ էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, էկոնոմիկայի, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների բնագավառների պետական լիազոր մարմինների ղեկավարները կամ նրանց կողմից այդ նպատակով լիազորված պաշտոնատար անձինք (այսուհետ՝ իրավասու պաշտոնատար անձինք) առաջարկում են գույքի սեփականատիրոջը կամ բացառիկ դեպքերում, երբ գույքի սեփականատերը կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ՝ գույքի օրինական տիրապետողին (այսուհետ՝ գույքի օրինական տիրապետող)՝ գույքն օգտագործման նպատակով տրամադրել համապատասխան մարմնին:

3. Առաջարկությունը ներկայացնելիս գույքի օրինական տիրապետողին ներկայացվում է անհրաժեշտ գույքը, գույքի օգտագործման անհրաժեշտության հիմնավորումը (եթե այն գաղտնի չէ), գույքը վերադարձնելու (անհնարինության դեպքում՝ փոխհատուցելու) պետության պարտականությունը, ինչպես նաեւ նախազգուշացում այն մասին, որ կամավոր չհանձնելու դեպքում գույքը կարող է վերցվել հարկադիր կարգով:

4. Առաջարկությունը ներկայացվում է գրավոր, իսկ հրատապության դեպքում կարող է ներկայացվել նաեւ բանավոր (այդ թվում՝ կապի միջոցներով): Գրավոր առաջարկի դեպքում այն հանձնվում է գույքի օրինական տիրապետողին առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում ուղարկվում հաշվառման (գտնվելու) վայրի հասցեով՝ զուգահեռաբար այն տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (առանձնացված

	բաժնում), եթե հրապարակման ենթակա տեղեկությունները գաղտնիք չեն պարունակում: Առաջարկում (բանավոր եւ գրավոր) սահմանվում է պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետը, իսկ գրավոր առաջարկում՝ նաեւ ձեւը: 5. Գույքի օրինական տիրապետողի համաձայնության դեպքում իրավասու պաշտոնատար անձը կազմում է գույքի կամավոր հանձնման վերաբերյալ արձանագրություն, որը պետք է պարունակի առնվազն հետեւյալ տեղեկությունները. 1) գույքի (նաեւ դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը, 2) համապատասխան մարմին հանձնելու եղանակը, վայրը եւ ժամանակը, 3) գույքի օրինական տիրապետողի տվյալները՝ անունը, ազգանունը (անվանումը) եւ բնակության (գտնվելու) վայրը, 4) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը ե պաշտոնը, 5) նշում սույն հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերով սահմանված կարգի մասին: 6. Գույքը լուսանկարվում է, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ (լուսանկարները պահպանվում են մինչեւ գույքի վերադարձը): 7. Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, ստորագրվում է այն կազմող իրավասու պաշտոնատար անձի եւ գույքը կամավոր հանձնելու համաձայնություն տված օրինական տիրապետողի կողմից, որին տրամադրվում է արձանագրության մեկ օրինակը: 8. Գույքը կամովին հանձնելուց հրաժարվելու դեպքում գույքը կարող է օգտագործման վերցվել հարկադիր կարգով: Ընդ որում, սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված առաջարկով սահմանված ժամկետում որեւէ դիրքորոշում չներկայացնելը համարվում է գույքը կամովին հանձնելուց հրաժարում: 9. Գույքը հարկադիր կարգով օգտագործման վերցնելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի՝ 1) գույքի (նաեւ դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը, 2) գույքի գտնվելու վայրը, 3) գույքի օրինական տիրապետողի տվյալները, 4) գույքի օրինական տիրապետողին սույն հոդվածով սահմանված կարգով առաջարկ ներկայացնելու եւ վերջինիս կողմից գույքը կամովին հանձնելուց հրաժարվելու մանրամասները, 5) գույքը վերցնելու եղանակը եւ ժամանակը, 6) գույքը օգտագործելու նպատակը (եթե այն գաղտնի չէ),

	7) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը, պաշտոնը եւ ստորագրությունը, 8) նշում սույն հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերով սահմանված կարգի մասին: 10. Գույքը լուսանկարվում է, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ (լուսանկարները պահպանվում են մինչեւ գույքի վերադարձը): 11. Արձանագրությունը տրվում է գույքի օրինական տիրապետողին առձեռն կամ ուղարկվում է պատվիրված փոստով: 12. Այն բացառիկ դեպքերում, երբ գույքի օրինական տիրապետողը կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, սակայն հաշվի առնելով այդ գույքի օգտագործման հրատապությունը, հնարավոր չէ բավարար միջոցներ ձեռնարկել օրինական տիրապետողին կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, գույքը կարող է վերցվել անմիջապես՝ առանց սույն հոդվածի 2-11-րդ մասերով սահմանված ընթացակարգերի պահպանման: Գույքը կարող է վերցվել անմիջապես նաեւ այն բացառիկ դեպքերում, երբ սույն հոդվածի 2-11-րդ մասերով սահմանված ընթացակարգերի պահպանումը եւ դրանով պայմանավորված գույքի օգտագործման հապաղումը կարող են հանգեցնել ծանր հետեւանքների: Սույն մասով նախատեսված դեպքերում կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի՝ 1) գույքի (նաեւ դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը, 2) գույքի գտնվելու վայրը, 3) գույքը օգտագործելու նպատակը (եթե այն գաղտնի չէ) եւ հրատապության հիմնավորումը, 4) գույքի օրինական տիրապետողի տվյալները, եթե հայտնի են, իսկ եթե ոչ՝ այն միջոցները, որոնք ձեռնարկվել են դրանք պարզելու համար, 5) գույքը վերցնելու եղանակը եւ ժամանակը, 6) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը, պաշտոնը եւ ստորագրությունը, 7) արձանագրությունը կազմելու ժամանակը, 8) նշում սույն հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերով սահմանված կարգի մասին: 13. Գույքը լուսանկարվում է, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ (լուսանկարները պահպանվում են մինչեւ գույքի վերադարձը): 14. Արձանագրությունը (լուսանկարների հետ) անհապաղ տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջում, իսկ օրինական տիրապետողի կամ նրա բնակության վայրը հայտնի դառնալու դեպքում անհապաղ միջոցներ են

	ձեռնարկվում արձանագրությունը վերջինիս տրամադրելու համար: 15. Սույն հոդվածով սահմանված կարգով օգտագործման վերցված գույքը վերադարձվում է դրա օրինական տիրապետողին գույքի օգտագործման անհրաժեշտությունը վերանալու եւ գույքը վերադարձնելու հնարավորություն առաջանալու դեպքում, սակայն ոչ ուշ, քան ռազմական դրության գործողության դադարեցումից հետո՝ 45-րդ օրը: Այն դեպքում, երբ հայտնի չէ օրինական տիրապետողը, ապա գույքը պահվում է ռազմական դրության գործողության դադարեցումից հետո՝ երկու տարի, որի ընթացքում միջոցներ են ձեռնարկվում նրան հայտնաբերելու ուղղությամբ: Այդ ընթացքում օրինական տիրապետողին չհայտնաբերելու դեպքում գույքը դառնում է պետության սեփականությունը: 16. Գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում դրա օրինական տիրապետողի դիմումի հիման վրա տրվում է համարժեք փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ժամկետներում եւ չափով: Եթե գույքը վերադարձվում է վնասված, կամ գույքի օգտագործման արդյունքում առաջանում է բաց թողնված օգուտ, ապա գույքի օրինական տիրապետողի դիմումի հիման վրա տրվում է համարժեք փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ժամկետներում եւ չափով: 17. Սույն հոդվածը չի տարածվում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ», «ժգ» եւ «ժդ» ենթակետերի հիման վրա տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի, զենքի, զինամթերքի, ռազմամթերքի, թունավոր նյութերի, մարտական եւ ուսումնական ռազմական տեխնիկայի, պայթուցիկ եւ ռադիոակտիվ նյութերի ժամանակավոր առգրավման, տրանսպորտային միջոցների ներգրավման, ինչպես նաեւ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի հիման վրա ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցների ներգրավման դեպքերի վրա:»:

Օրենսդրական ակտի անվանումը

ՀՀ Աշխատանքային օրենսգիրք

Փոփոխության կարգավիճակը

Փոփոխություններն ուժի մեջ են:

Ինչ այլ օրենսդրական ակտեր են փոփոխվելու դրա արդյունքում

Այլ օրենսդրական ակտեր չեն փոփոխվելու:

Ինչին են վերաբերում փոփոխությունները

Առաջարկվող կարգավորման նպատակը ռազմական դրություն հայտարարվելու հանգամանքով պայմանավորված աշխատանքային հարաբերություններում առաջացող մի շարք հարցերի կարգավորումն ու եղած դրույթների առավել հստակեցումն է:
Փոփոխությունների արդյունքում ստեղծվում են ռազմական դրության ընթացքում զորակոչվախ, ինչպես նաև կամավորական հիմունքներով մարտական գործողություններ կատարող աշխատողների համար լրացուցիչ երաշխիքներ՝ մասնավորապես, պահպանվում է նրանց աշխատատեղը, և այլն:

Հոդված 105. **Աշխատանքի էական պայմանները փոփոխելը.**	**Ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով** «6. Ռազմական դրության ժամանակահատվածում սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերի դրույթները չեն տարածվում պետական, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային կազմակերպությունների ու հիմնարկների, ինչպես նաեւ ռազմական դրությամբ պայմանավորված որեւէ ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարմանն անցած կազմակերպություններում ու հիմնարկներում (անկախ սեփականության ձեւից) ռազմական դրությամբ պայմանավորված աշխատողների աշխատանքի վայրի փոփոխման դեպքերի վրա:»

Հոդված 124. Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը՝ կապված զինվորական ծառայության անցնելու հետ 2. Զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, զորակոչային տեղամասերի կցագրվելու և վարժական հավաքների կանչվելու ընթացքում աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:	Փոփոխել վերնագիրը՝ Հոդված 124. Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը՝ կապված զինվորական ծառայության անցնելու եւ կամավորական հիմունքներով մարտական գործողությունների մասնակցելու հետ». 2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. Զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, վարժական հավաքների, զինվորական վարժանքների, զորավարժությունների մասնակցելու կամ զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելու ընթացքում աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:» Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ եւ 4-րդ մասերով. «3. Զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելիս կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս աշխատողն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը): 4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում աշխատանքային պարտականությունների կատարումից աշխատողն ազատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի տրամադրած՝ զորահավաքային զորակոչի կանչվելու վերաբերյալ ծանուցման կամ կամավորական հիմունքներով պաշտպանությանը ներգրավելու մասին տեղեկանքի հիման վրա, իսկ աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված ժամանակահատվածի համար գործատուի կողմից աշխատողի վարձատրությունը որոշվում է կողմերի համաձայնությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

Հոդված 138. **Աշխատաժամանակի կառուցվածքը** **2. Աշխատաժամանակում չեն ներառվում, սակայն աշխատանքային ստաժում հաշվարկվում են՝**	**Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով՝** 2.1) որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը.
Հոդված 165 **Ամենամյա արձակուրդի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը**	**Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով՝** 6.1) վարժական հավաքների մասնակցելու, զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելու կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը.

Հոդված 166 Ամենամյա արձակուրդից հետ կանչելը **Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ: Ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տրամադրվում է սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան:**	**Փոփոխել հետևյալ բովանդակությամբ՝** 1. Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: 2. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում պետական, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային կազմակերպությունների ու հիմնարկների, ինչպես նաեւ ռազմական դրությամբ պայմանավորված որեւէ ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարմանն անցած կազմակերպությունների ու հիմնարկների (անկախ սեփականության ձեւից) աշխատողներին ամենամյա արձակուրդից հետ

	կանչելիս աշխատողի համաձայնությունը չի պահանջվում: 3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված դեպքերում ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տրամադրվում է սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերին համապատասխան:

Հոդված 175. **Պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար աշխատանքային պարտականությունների կատարումից ազատումը** 4.1) որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս.	**Ուժը կորցրած ճանաչել 4.1 կետը**

Հոդված 184. **Արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի վարձատրությունը**	**Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով՝** 2. Ռազմական դրության ժամանակահատվածում սույն հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը հավելում վճարելու պարտավորության մասով չի տարածվում պետական, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային կազմակերպությունների ու հիմնարկների, ինչպես նաեւ ռազմական դրությամբ պայմանավորված որեւէ ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարմանն անցած կազմակերպությունների ու հիմնարկների (անկախ սեփականության ձեւից) աշխատողներին ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքումներգրավելու դեպքերի վրա:

Հոդված 185. **Աշխատանքի վարձատրությունը հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին**	**Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով՝** 1.1. Ռազմական դրության ժամանակահատվածում սույն հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը չի տարածվում պետական, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային կազմակերպությունների ու հիմնարկների, ինչպես նաեւ ռազմական դրությամբ պայմանավորված որեւէ ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարմանն անցած կազմակերպությունների ու հիմնարկների (անկախ սեփականության ձեւից) աշխատողներին ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքում ներգրավելու դեպքերի վրա:

Հոդված 195. **Միջին աշխատավարձը** 2. Աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է այդպիսի պահանջ առաջանալու ամսվան նախորդող վերջին տասներկու ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության բոլոր տեսակների (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն) ընդհանուր գումարը տասներկուսի բաժանելու միջոցով: Հաշվառման ենթակա տասներկու ամիսներում չպետք է ներառվեն այն ամիսները, որոնց ընթացքում աշխատողը եղել է ժամանակավոր անաշխատունակության մեջ և (կամ) արձակուրդում և (կամ) ոչ իր մեղքով պարապուրդում:	**Լրացնել հետևյալ նախադասությամբ՝** (…)ինչպես նաեւ զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, վարժական հավաքների, զինվորական վարժանքների, զորավարժությունների մասնակցելու, զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելու կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ամիսները: Սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված աշխատանքային պայմանագրերից (անհատական իրավական ակտերից) ծագած հարաբերությունների վրա

Օրենսդրական ակտի անվանումը

ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք

Փոփոխության կարգավիճակը

Փոփոխություններն ուժի մեջ են:

Ինչ այլ օրենսդրական ակտեր են փոփոխվելու դրա արդյունքում

Այլ օրենսդրական ակտեր չեն փոփոխվելու:

Ինչին են վերաբերում փոփոխությունները

Ռազմական դրության իրավական ռեժիմի հետեւողական պահպանման կարեւորագույն երաշխիքներից է ռազմական դրության բովանդակությունը կազմող միջոցառումների խախտմանը կամ սահմանափակումների չպահպանմանը համաչափ սանկցիաների նախատեսումը, որոնք կոչված են երաշխավորելու ռեժիմի արդյունավետ պահպանությունը: Փոփոխություններով սահմանվում է ռազմական դրության իրավական ռեժիմի բովանդակությունը կազմող, օրենքով նախատեսված սահմանափակումների չպահպանման կամ միջոցառումների խախտման համար նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ, առավել մեծ հանրային վտանգավորություն ունեցող արարքների դեպքում նախատեսվում են քրեական պատասխանատվության միջոցներ, եթե դրանք առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ:

	Հոդված 31.1. Տնտեսական գործունեության կասեցումը 1. Տնտեսական գործունեության կասեցումը տնտեսական գործունեության ժամանակավոր դադարեցումն է: 2. Տնտեսական գործունեության կասեցումը կարող է նշանակվել մեկ ամսից մինչեւ երեք ամիս ժամկետով:
	Հոդված 182.5. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը 1. Ռազմական դրություն հայտարարված տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը կամ տարածք մուտք գործելու եւ տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով: 2. Ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների եւ ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումները

	խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով: 3. Սահմանված՝ սննդամթերքի, դեղորայքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման եւ շրջանառության հատուկ կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով: 4. Պարետային ժամի սահմանման դեպքում առանց անձը հաստատող փաստաթղթերի եւ հատուկ թույլտվությունների փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելքը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով: 5. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, լրագրողի կողմից հավատարմագրման հատուկ կարգը չպահպանելը, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնները խախտելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով: 6. Լրատվական գործունեություն չիրականացնող անձանց կողմից ռազմական դրության ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչեւ յոթհարյուրապատիկի չափով: 7. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերով նախատեսված տույժերին ենթարկվելուց հետո՝ անհապաղ, ռազմական դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական

	գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչեւ հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ լրատվական գործունեություն չիրականացնող անձանց նկատմամբ՝ յոթհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով: 8. Զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ եւ թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի սահմանափակումը կամ արգելքը խախտելը, թմրեցնող, հոգեմետ, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների եւ պրեպարատների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմը խախտելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով: 9. Պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական եւ այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից աշխատունակ անձի հրաժարվելը կամ տրանսպորտային միջոց տրամադրելուց հրաժարվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով: 10. Ռազմական դրության ժամանակ գործադուլներ եւ հավաքներ կազմակերպելը, անցկացնելը եւ դրանց մասնակցելը, կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելքը խախտելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչեւ յոթհարյուրապատիկի չափով: 11. Կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձեւից) կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսության, պաշտպանության եւ բնակչության կենսագոյության համար հատուկ նշանակություն ունեցող արտադրանքի թողարկման (ներառյալ՝ դեղերի եւ բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման) առաջնահերթ կատարման ենթակա առաջադրանքները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի

		չափով: 12. Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների գործունեությունը խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով: 13. Սույն հոդվածով սահմանված արարքներից որեւէ մեկը (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված արարքների) վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախկինում նույն արարքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով: 14. Կազմակերպության կողմից սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ եւ 11-րդ մասերով նախատեսված արարքներից որեւէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո կրկին կատարելը՝ առաջացնում է տնտեսական գործունեության կասեցում՝ մեկ ամսից մինչեւ երեք ամիս ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչեւ ռազմական դրության իրավական ռեժիմի ավարտը:
Հոդված 214.	**Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու համար լիազորված մարմինները (պաշտոնատար անձինք)**	Լրացնել՝ **Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը** **Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 223.3-րդ հոդվածով.** **«Հոդված 223.3. Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը** 1. Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը քննում է սույն օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ եւ 14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, եթե դրանք վերաբերում են տեսալսողական մեդիածառայություն մատուցող լրատվական գործունեություն իրականացնողներին

Օրենսդրական ակտի անվանումը

ՀՀ Քրեական օրենսգիրք

Փոփոխության կարգավիճակը

Փոփոխություններն ուժի մեջ են:

Ինչ այլ օրենսդրական ակտեր են փոփոխվելու դրա արդյունքում

Այլ օրենսդրական ակտեր չեն փոփոխվելու:

Ինչին են վերաբերում փոփոխությունները

Սույն փոփոխություններն ուղղված են զինվորական հանցագործությունների դեպքում նախատեսվող պատժի միջոցների կարգավորմանը և դրանց առավել հստակեցմանը՝ Պայմանավորված երկրում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմով:

Հոդված 327. Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը 3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:	**«չորսից ութ» բառերը փոխարինել «վեցից տասներկու» բառերով:**
Հոդված 327[1]. Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելը 4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:	**«երեքից ութ» բառերը փոխարինել «վեցից տասներկու» բառերով:**

Հոդված 327². **Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից խուսափելը** 3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:	**«վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով:**
Հոդված 327.6. **Զորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք ապօրինի մուտք գործելը** 5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:	**«հինգից ութ» բառերը փոխարինել «հինգից տասը» բառերով:**
Հոդված 356. **Հրամանը չկատարելը** 3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասնհինգ տարի ժամկետով:	**«հինգից տասնհինգ» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով:**
Հոդված 361. **Զորամասը կամ ծառայության վայրն ինքնա[illegible]** 7. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:	**«երեքից ութ» բառերը փոխարինել «վեցից տասներկու» բառերով:**
Հոդված 362. **Դասալքությունը** 3. Դասալքությունը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:	**«վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով:**

ՄԱՍ II

Նոր օրենսդրական ակտեր

Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին ՀՀ Օրենք

Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում մեծ քանակությամբ ապրանքներ, որոնք հետագայում անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը եւ (կամ) Առողջապահության նախարարությանը:

Բացի այդ, առկա են նաեւ դեպքեր, երբ Պաշտպանության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը եւ (կամ) Առողջապահության նախարարությանը անհատույց (նվիրատվությամբ) հանձնվում են նաեւ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ:

Խնդիրը կայանում է նրանում, որ գործող հարկային օրենսդրության համաձայն՝ անկախ հետագայում ապրանքները անհատույց (նվիրատվությամբ) պետությանը հանձնելու հանգամանքից, հարկ վճարողների կողմից ապրանքների ներմուծումը հարկվում էր ԱԱՀ-ով, իսկ որոշ ապրանքների դեպքում՝ նաեւ ակցիզային հարկով եւ (կամ) բնապահպանական հարկով, ինչը լրացուցիչ բեռ էր ներմուծող անձանց համար:

Մյուս կողմից, ռազմական դրության ժամանակահատվածում պետությանն անհատույց (նվիրատվությամբ) ապրանքներ մատակարարող հարկ վճարողների համար լրացուցիչ բեռ էր նաեւ ապրանքների դրոշմավորման պարտավորությունը:

Օրենքի նպատակը ռազմական դրության ժամանակահատվածում ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների մասով հարկային արտոնություն սահմանելն է:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծման մասով հարկային արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների՝ ակցիզային դրոշմանիշներով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ապրանքների ներմուծումն ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից եւ (կամ) բնապահպանական հարկից ազատելը

1. Ռազմական դրության ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ Կառավարության հաստատած ցանկում

ներառված ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից եւ (կամ) բնապահպանական հարկից՝ այդ ապրանքները ռազմական դրության ժամանակահատվածում պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

2. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ նոտարների կողմից ներմուծված ապրանքները պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի եւ նոտարների կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով դուրս գրված եւ պաշտպանության նախարարության, արտակարգ իրավիճակների նախարարության, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ (կամ) առողջապահության նախարարության վավերացրած հաշվարկային փաստաթղթերով: Անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ներմուծված ապրանքները պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու փաստը հաստատվում է կողմերի միջեւ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով:

3. Կառավարության հաստատած ցանկում ներառված եւ ռազմական դրության ժամանակահատվածում պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների մասով Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 73-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն:

Հոդված 3. Ռազմական դրության ժամանակահատվածում անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված ապրանքների մասով ակցիզային դրոշմանիշներով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունից ազատելը

1. Դրոշմավորման ենթակա չեն ռազմական դրության ժամանակահատվածում Օրենսգրքի 389-րդ եւ 390-րդ հոդվածների համաձայն՝ ակցիզային դրոշմանիշներով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները՝ պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում: Ռազմական դրության ժամանակահատվածում դրոշմավորված ապրանքներ հանձնելու դեպքում դրա վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերում:

Հոդված 4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ

տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչեւ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից ներմուծված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող, ինչպես նաեւ անհատույց (նվիրատվությամբ) մատակարարված բոլոր ապրանքների նկատմամբ՝ դրանք սույն օրենքով սահմանված կարգով պաշտպանության նախարարությանը, արտակարգ իրավիճակների նախարարությանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը եւ (կամ) առողջապահության նախարարությանն անհատույց (նվիրատվությամբ) մատակարարելու դեպքում:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ցանկը Կառավարությունը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

ՀՀ Կառավարության որոշումը թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին

Սույն որոշմամբ նախատեսվում է ժամանակավորապես արգելել թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծումը:
Թուրքական ծագում ունեցող ապրանքների շարքում,որոնց ներմուծումը նախատեսվում է արգելել,մասնավորապես ընդգրկված են հրուշակեղեն,դեղամիջոցներ,դեղագործական ապրանքներ,հագուստ,հագուստի պարագաներ,մեքենաներ,սարքավորումներ և մեխանիզմներ,ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր,նավթամթերք,օծանելիք,լվացող միջոցներ և այլ պարագաներ:

Ծանոթություն:Ապրանքի ծագման երկիրը որոշվում է՝ <Մաքսայինկարգավորման մասին> ՀՀ օրենքի համաձայն՝ ապրանքի ծագման երկիր է համարվում այն երկիրը,որտեղ ապրանքն ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման:

Բավարար վերամշակման չափանիշներ են համարվում այն աշխատանքները,որոնց հետևանքով՝
1)տեղի է ունեցել ԱՏԳ ԱԱ-ում ապրանքի ապրանքային ծածկագրի առաջին չորս նիշերից ցանկացածի փոփոխություն,
2)տվյալ ապրանքի արտադրության մեջ օգտագործվող տվյալ երկրի ծագում ունեցող նյութերի արժեքի և ավելացված արժեքի տոկոսային բաժինը կազմում է 30 տոկոսը,ընդ որում,այդ գնի մեջ հաշվի չեն առնվում անուղղակի հարկերը,առևտրային վերադիրները,տրանսպորտային,ապահովագրման,պահպանման և համանման այլ ծախսեր:

ՀՀ կառավարության որոշում 1708-Ն, 20 Հոկտեմբերի 2020թ.

Թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին

Հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրը և հաշվի առնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի N 21 կարգադրությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. ժամանակավոր արգելել Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագման ապրանքների ներմուծումը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ծանուցել սույն որոշման 1-ին կետով նախատեսված ժամանակավոր արգելքի մասին:
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետի կատարման նկատմամբ վերահսկողություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 31-ից և գործում է վեց ամիս ժամկետով:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

ՀԱՍՑԵ՝ Էրեբունի պլազա բիզնես կենտրոն
Վազգեն Սարգսյան
26/1,սենյակ 412,Երևան 0010

Հեռախոս՝ +374 11 520 510

Էլ.փոստ՝ info@legelata.am

Կայք՝ www.legelata.am